

կանալ ի սեպտեմբեր ամսոյ ամիսն անցելոյ, հայադ-
գի բնիկը Բագրեմանդայ, Մշոյ և այլ բազում տե-
ղեաց թուրքերով, թողնալ զհայրենական տունս և
զարտորայս իւրեանց առանց իրիւր լինամոց, յերե-
սաց սովոյն և նոթութեան գաղթեալ եկին հա-
սին այսր ի սահմանս Ռուսիոյ հանդերձ ընտա-
նեօք և զաւակօք իւրեանց յեղեկ թշուառութեան
և չքաւորութեան, անինամ և անապաստան և ի
լուսնն այս ամենայն թշուառութեանց, յանցանքն
իւրեանց ընդ սահմանս Ռուսիոյ, պէսպէս չարա-
բանօք գանակոծեալ կողպտեցան ի մարդախոշոյ
բուրդ հրտակաց համախեյն անուանեալ գնդին և
կորուսին զոր ունէին և զարդիս գտանին ի վշտա-
լի անձկութեանս:

Ահաւասիկ այսպիսի վիճակօք պատեալ պաշարեն
զմեօք բազմաթիւ գաղթեալներ աւաղելի ժողովու-
րեանս, որոց անկարագրելի և սրտատուօր զու-
թեան անձամբ անձին՝ ականատես եղաւ, և զթշուա-
ռութենէն նոցին պատմագրել Ձեզ մի առ մի ոչ
զորէ գրիչ մեր, գլխաւ և զսիրտ մեր ի նոյն
սուգ և ի տխրութեան համակեալ: Թէպէտ ի բնիկ-
բանէ կառավարութիւնն Ռուսիոյ ոչ թոյլ տայր
գաղթեալանաց անցանել և կամէր դնոսա անդը
ընդ սահմանս ի բաց մերձել ի խտաշունչ պա-
հու ձմեռան, որով ի գաղթել թշուառութեան հա-
սեալ ի կորուստ ի մահ կործանելոցն էին արդէն,
սակաւն տեղեկացեալ մեր կարի ցաւակցութեամբ
զտառապանս նոցա, վշտալի սրտիւ փութացաւ
ուր ուրեմն միջնորդել առ կառավարութիւնն Ռու-
սիոյ, և նախապայտան յերեանայ, յետ ընկալնոյ
զթոյլութեան ի բարձրագոյն իշխանութենէն,
ժանոց մեզ զհարաւորութիւնն առ ժամանակեայ
ընկալութեան ի գիւղս մինչ բացցին զրուսք զար-
նանային եղանակաց առ ի վերադարձեցանել
գնոսա անդէն ի տեղիս իւրեանց:

Ուստի իբրեւ Հայր հասարակաց փութամբ յոր-
դուր զՁեզ, որպէս արթուն հովիւ յանձնեալ Ձեզ
հօտիւ և վշտաց վշտակից, զօրացեալ և արիւնցեալ
յիւրեանոր խնամակալն փոքրկանցս այսոցիկ,
միջնորդ և բարեխօս լինել առ Բ. Գուսն և հրա-
ւիրելով զբարեհաճ ուղարկութիւն մեծի Կայսերն
օսմ. տխրութեան՝ առաջի առնել գաղթողներ վի-
ճակ ժողովրդեանս, հոգեւոր որդեաց մերոց, և միա-
գամայն բացայայտ առնել հանգամանօրէն զանցից,
որոց հանդիպեցան թշուառացեալն յերեսաց սո-
վոյն և ի ձեռն համիտից՝ գնդին: Գաղթեալներս
այսոցիկ հաւատարմիւ հպատակք են ի դարաւոր
ժամանակաց հետէ օսմ. Գահոյցն և արտասուօք
և ողորմ, սովեալ և ծարաւի, ստիպեալ եղեն
թողուլ զհայրենիս իւրեանց, յուսացեալ այլուր
զերծ մնալ ի սովալուր մահուանէ: Արդ ժամ է
հայրական խնամամոլութեամբ ջանալ ժողովել զու-
սան, ուր անդստին ի տղայ տիւր վարէին զկեանս
ընդ հովանաւորութեամբ վեհ. Կայսերն: Յերեսաց
սովոյն և հարստաւորութեան եկեալ այսր առ ի

քանակութիւնը: Դտեմարանը, որտեղ մենք նըս-
տած էինք, ներկայացնում էր մի մութ, քարային
շինութիւն, որը, չը նայելով իր կոնստանտինոպոլսեան
անընդհատ կաթնով էր, այնպէս որ իմ գրած թուղ-
թը անձրեկ կաթիլներից ամբողջովին զերծ էր:
Սարսափելի խոնավ էր և նստելու տեղ անգամ
չը կար: Սրա վրա տակերացրէ 4—500 հոգու
զրօր աղմուկը, գլխեր գորգոտոցը, և գաղափար
կը կազմէր, թէ ինչ դրութիւն էր:

Ի դէպ, չեմ կարող չարձանագրել այն գովելի
գործունէութիւնը, որ ցոյց են տալիս Նոր-Բայա-
զէտի վարչութեան անդամները: Վերեւում նկա-
րագրած տեսարանին նրանք ներկայ են համա-
րեա ամեն օր: Նրանց համար չը կայ տօն կամ
կիրակի օր, նշանակութիւն չունի անձրեկ, ձիւն,
բուր կամ գիւղեր ժամանակը. նրանց առաջնոր-
դում է միմիայն կարօտեալների օգնութիւն
հասցնելու շտապօրէն ձգտումը: Ահա մի գործ,
որը իսկապէս արժանի է հրապարակական շնոր-
հակալութեան: Պէտք է անձամբ ներկայ լինել
տեսնելու համար, թէ այդ վարչութիւնը ինչ տա-
ժանելի դժուարութիւններ է կրում, մասնաւոր
այն անձանց դէմ, որոնք ունենոյ լինելով՝ աշխա-
տում են խաբել և աղքատ ձեռնապալ՝ անխղճօրէն
ուզում են խել չքաւորի և աղքատի այդ միակ
օգնութիւնը: Այդտեղ և բարկանում են, և կրու-
ւում, և յանդիմանում, և նախատում և դուրս վը-
ռնողում:

Հէնց որ ալիւրի բաժանվելը սկսվեց, որը մերի
որը բորիկ, որը ցնցողիներ հազած, որը մի
չուալ, տոգարակ, պարկ, կամ ինչ որ տանը կամ

գտանել ապաստան ինչ առժամանակեայ, իմա
ցան և տեսնել զի աստ ժողովուրդը բազումը են
և զիւրը բազմամարդը, և հաւաստեալ գիտեմ
թէ զոյն ինչ մասն հոգւ իսկ ոչ կարացեն
ստանալ գաղթեալներս և անուշտ ենք զի ի
վերջոյ թափուր յամենայնէ, անհարկին լինելի
նոցա հայթայթել զկեանս և լինելին աստան-
գական թափառողը, կարօտ չորաբեկ հացի ի
տար աշխարհիս, հեռի ի հայրենեաց և յետին
չար քան զառաջին:

Նկարագրեալ Ձեզ զայս ամենայն անձկութիւ-
նըս, որը օր աւուր յաւելուն առ Մեզ, փափաքե-
լով փափաքելով տեղեկանալ և զհանգամանս և
զդրութիւն Ձեր և առ հասարակ գնեկայ վիճակ
ժողովրդեանս Հայոց ի հայրենակ գաւառս թուր-
քիոյ: Ի լրոյ և ի յազարաց տեղեկացաւ վասն սո-
վոյն իշխելոյ զարդիս ի կարին, ի վասն, ի Մուշ և
յայլ տեղիս. սակայն անդիտակ եմք արդարեւ թէ
Պոնտոս առ սովեալս և կարօտեալս ի Նիկովի-
դիոյ և ի զանազան կողմանց և թէ զինչ խորհի
Տէրութիւնն թուրքիոյ վասն թեթեւացանելու
և ամբողջ զմարտաւար դրութիւն բազմաշար-
չար որդեաց մերոց:

Ուստի առաջարկեմք Ձերուր Սրբազնութեան
հաղորդել Մեզ զայս ամենայն մանրամասնօրէն
ի դիտութիւն, որպէս զի երկուսեք ջան ի գործ
զերծելու կարելոյն հասանել յօգնութիւն ան-
միկթար ժողովրդեանս, զի մի յօգնաշարչար և
բազմակարօտ հօտին Հայոց հովիւր կարգեալս
անտարբերութեան շահեսցուր զհամբաւ, այլ ըզ-
պարտիս մեր հատուցուր աղքատ ի տառապանս
և նեղութեան իւրում, հաւատարմ կացեալ բա-
նին յերկային օգնական ամենեցուն թէ «Որով-
հետե արարիք միում յեղբարցս այսոցիկ փոք-
կանց» ինձ արարիք»:

Ողջ երեւոք ի Տէր
Մ Կ ր տ ի Կ Կ թողիկոս ամենայն հայոց

Ի՞նչ է ՊԱՏԱՆԿ

Վերջին օրերս օրվայ հարց և հասարակութեան
համար տաք վիճաբանութիւնների առարկայ է
դարձել Արիստակէս եպիսկոպոսի «Ո՛վ հաւա-
տաց յօղուածը: Հասարակութեան այդպիսի ի-
րարանցումը, թերևս դեմ կարծիքները այդ յօղու-
ծի վերաբերմամբ, ինքն ըստ ինքեան ապացու-
ցանում են, թէ ինչքան յարմար է րօպէս և ինչ-
քան հասունացած է այն հարցը, որին վերաբե-
րում է յիշեալ յօղուածը:

Իսկ հարցը շատ պարզ է: Այն միջոցին, երբ
հայ ժողովուրդը ոգևորված էր՝ տեսնելով ինչ
միաձայն գահի վրա խրանալ Հայրիկին, որի ա-
նուան և անցեալի հետ ոչ մի հայ չէր կարող
հարեանի մօտ գտել էր, առնում ներս էին մըտ-
նում: Մի երկու գիւղացիներ էլ պարկերի բերան-
ներս էին բացում և լցնում: Այդ տեսարանը ա-
մենաստնաշարժի էր: Նրանք, մասնաւոր կանայք,
ներս են մտնում, առնում են իրանց քաղցա-
րեղ քանակները մի երկու տասնավայ պարկեր, զգում են
չալակը և արտասուքը քաղցրին օրհնում օգնող-
ներին:

Փակագծի մէջ յիշենք, որ Երևանի ճիւղի ընդ-
հանուր ժողովը 1800 րօպէլ՝ այդ նպատակին
յատկաշնչու ժամանակ, պարտաւորեցրեց վարչու-
թեանը և իր կողմից մարդ ընտրեց, որպէս զի
նրանք անձամբ բաժանեն նպաստը, բացատրելով
որ դա ընկերութեան կողմից է, որպէս զի այդ
գաղափարը տարածվել Սյոք ըմբռ, շնորհիւ Նոր-
Բայազէտի վարչութեան, լիակատար կատարուեմ
է ստացել, այն ինչ Գարայիչալում, որտեղ ստ-
ափելի կարօտութեան մէջ են Վերին-Ախտա, Գըդ-
մաշէն, Թաշլարուի, Քարվանսարա, Եսիջի և ու-
րիշ գիւղեր և որոնց այդ 1800 րօպէլուց պէտք
է նպաստ հասնէր, մինչև օրս էլ չը գիտեն, թէ
բարեգործական ընկերութիւն կայ:

Նպաստ ստացողներին օրհնանքը, խօսքերը, լա-
ցը շատ անգամ շատ աղօղել էին: Ես երբեք չեմ
կարող մոռանալ այն գիւղացի Բայէ Մոսիսանին,
որը համար էր և ալ կողմից թուլացած: Նրա հա-
մար կշռում էին ալիւրը. հարցրի քանի նափար
են տանը և ինչով են կերակրւում: Նրա դէմքի
վրա կարդացում էր քաղցած մարդու անդոյս
վիշտը և անել դրութիւնը. նա այդ դրութիւնով
պէտք է կերակրէր մի ամբողջ մեկը ընտանիք:

այել մի օր և է յետադէմ գործ, որ և է չնչին
սակարկութիւն խոճի հետ և անհաւատարմու-
թիւն ընդհանուր լուսաւոր գաղափարների վերա-
բերմամբ:—այդ միջոցին, ասում ենք, իշխման-
նում և թեմերում ոչ միայն կատարվում է ազգա-
քանանների ձեռնարկութիւն, այն էլ, ինչպէս
ասում են, տասնեակներով, այլ և էջմիածնի
օրդան «Արարատ» դեռ փորձում է Արշէն
երեցի բերանով արդարացնել այդ վարմունքը,
պաշտպանելով բարձր հոգեւորականութիւնը և ամ-
բողջ պատասխանատւութիւնը զցելով ժողովրդի
վրէն, այն էլ ազգէտ, անկիրթ ժողովրդի, որով-
հետե խօսքը զլիսաւորապէս գիւղական քանան-
ների մասին է: Այդ էլ բաւական չէ. առաջ բե-
րելով գիւղացու խօսքերը, թէ «մեզ ուսեալ
քանանայ չի կպիր» և այլն, Արշէն երեցն արդէն
միանգամայն գայթակղեցնում է հասարակութիւնը
և սրբագործում է այն, ինչ որ թէպէտ մինչև
այժմ իսկապէս միշտ իրադրութիւն է եղել, բայց
գոնէ քողարկված, քոնէ անտիկնը՝ ազգէտ քանա-
նաններն ձեռնարկողները, մինչև այժմ չեն հա-
մարձակվել բացարձակապէս յայտնել, թէ այդ-
պէս էլ հարկաւոր է: Ոչ որ չէ կարող արդարա-
յնել Արշէն երեցին նրանով, որ դրանք իր խօսքերը,
իր համոզմունքը չեն, այլ գիւղացուն: Այդ էր
պակաս, որ նա ինքն էլ համամիտ լինէր ազգէտ
գիւղացու այդ անհիմն խօսքերին: Միայն թէ
ազգէտ քանանների ձեռնարկութեան գործում
բարձր հոգեւորականութեան մեղքը մեղմացնող
կարծեցեալ ապացոյցների թուում բերելով և
գիւղացու այդ խօսքերը, Արշէն երեցն անկասկա-
նուզում է ասել. «Թէպէտ ես սկզբունքով հակա-
ռակ եմ, ի հարկէ, գիւղացու ասածին և կաշ-
խատեմ նրան համազել իր կարծիքը փոխել, բայց
որովհետեւ այս րօպէսի գիւղացու համոզմունքն
այդպէս է, նա ուսեալ քանանայ չէ ուզում, ու-
րեմն բարձր հոգեւորականութեան մեղք է խո-
նարհվել իրողութեան առաջ և առ այժմ տալ
նրան իր խելքին մօտ, այսինքն ազգէտ քանանայ»:

Թէ ինչքան անժամանակ, տարօրինակ և ան-
միկթար են առաջ բերած այդ տեսակ մտքերը,
—դա, ի հարկէ, բացատրութիւնների կարօտ չէ:
Այդպիսի օպորտունիստական մտքեր գոցէ շատ
են գործվել և, ինչ որ զլիսաւորն է, միշտ գոր-
ծադրվել են մեր եկեղեցական կիսանքում, բայց
տեսնել և լսել մի և նոյնը խրիմեան Հայրիկի
կաթողիկոսութեան օրով:—դրա հետ ոչ որ չէ
ուզում և չէ կարող հայտնել:

Եւ տեսնելով այս բոլորը կատարվելիս լոյս ցե-
րեկով, ով պէտք է ամենից շատ խօսքով, յօղու-
վէր և մինչև անգամ իրան աննպաստ վերաւոր-
ված համարէր, եթէ ոչ մեր այն միակ բարձ-
րաստիճան հոգեւորականը, որը եղել է միշտ խրի-
մեանի ամենաանկեղծ հետեւորդներից, նրա կա-
թողիկոսութեան թեկնածութեան ամենաշնորհ
պաշտպաններից մէկը, նախանձանքիւր ամեն

ջանկանալով իմ հարցին պատասխանել, չը կա-
րողացաւ իրան գտել. երկու ձեռքերը արտասու-
վոր կերպով շարժեց, դարկեց ծնկներին, մեզ ան-
հատկանալի մի քանի խօսք մոտեցաւ, արտասու-
քը խելիքից նրան, սկսեց հեկեկալ և ապա վերց-
րեց գլխակը. մի վշտացած հայկացի գցեց դէպի
առաստաղը և «մեկ» քաշեց: Անկարելի էր դիմա-
նալ համար մարդու այդ արտայայտութիւններին, և
չը զգացվէր: Եւ ինչպէս չը զգացվէր, երբ մի ամ-
բողջ ընտանիք ապրում է համար և կաթնածանր
մի մարդու յուսով, երբ այդ ընտանիքի դուռը չա-
րաթնելով բացող չը կայ: Այդ մարդը եղում չու-
նի իր վիշտը արտայայտելու, ոյժ չունի գնալ
այն քաղցից տանջվում են իր ընտանիքը, իր մա-
նրը երեխաները: Եւ այդ մարդը, որ այսօր ան-
սպասելի օգնութիւն է ստանում, չէ կարողանում
գէթ շնորհակալութիւն յայտնել, այլ միայն հե-
կեկում է...

Նպաստ բաժանվեց 92 ընտանիքներին, 430 ան-
ձինքներից բաղկացած, իւրաքանչիւրին մօտ 15
ֆ. հաշիւով. մօտ 160 գողւ ալիւր: Որով-
հետե վարչութիւնը բաժանում էր ալիւրը ըն-
տանիքի աշխատելու անընդունակ անդամնե-
րին, պէտք է այդ 92 տունը հաշիւ մօտ
700 հոգի: Այդ գիւղը 300 տուն է, մօտ
3000 բնակիչներով, ասել է, թէ գիւղի մի քա-
նուրդը օգնութիւն է ստացել, որ քիչ չէ:
Ալիւրը բաժանուց յետոյ սկսվեց փոքրիկ ան-
կարգութիւն. կանայք, աղջիկներ, ծերեր ներս
թափվեցին և բոլորն էլ հաց էին պահանջում, որը

մի քայլում նրա փառքին և աջողութեան, և որի
համար հոգեւորական և մասնաւորապէս քանանա-
յական դասակարգի բարոյական, մտաւոր և մի-
ջև անգամ նրկական բարեւոյն հարցը դարձել
է մի տեսակ idée fixe իր ամբողջ գործունէու-
թեան ընթացքում: Եւ նա արտայայտեց իր խոց-
ված սրտի աղաղակը իր «Ո՛վ հաւատաց» յօ-
դուածով: Միթէ Արիստակէս եպիսկոպոսը չը դի-
տէր, թէ ինչ ճիշ, իրարանցում պէտք է բարձ-
րանայ իր դէմ իր երդուեալ հակառակորդների
միջնադուռում: Անկասկած նա շատ լաւ գիտէր
այդ և գուցէ աւելին էր սպասում, քան թէ կա-
րողացաւ արտադրել նրանց բոլր ուղեղը, բայց
այնու ամենայնիւ նա չէր կարող զսպել իր աղ-
նիւ բարկութիւնը, և նրա սրբազան պարտքն էր
մատնանել անել սպանող վտանգի վրա և ցոյց
տալ, որ այն համախօսականները, որոնցով դի-
մում են քանանայ ձեռնարկվելու, և այն պարոն-
ները, որոնք միջնորդում են այդ գործում, այն
տեսակիցն են, որոնք մեղադրեալների նստարան-
ների վրա պէտք է նստեն այն պատճառով, որ
կեղծում, ստում, հնարում են և ամեն բան առաջ
մղում կաշաքով, փողով...

Եւ Արիստակէս եպիսկոպոսն այդ արաւ բացար-
ձակապէս, առանց քողարկվելու, առանց կեղծե-
լու և շողջորթելու, առանց սովորական—աւան-
դական ըստ միջոցների զիսկելու: Ուրեմն պատիւ
նրա ոչ միայն համոզմունքների տոկոսութեան,
այլ և քաղաքացիական արիւթեանս:

Ամեն մի հասարակական գործիչ, լինի դա Արշէն
երեց, թէ մի որիչ անձ, ինչքան բարձր աստիճանի
վրա կանգնած էլ լինի նա, մեր խորին համոզմամբ,
չը պէտք է խուսափի, այլ ընդհակառակն, պէտք
է ձգտի իր գործունէութիւնը այդպիսի լուրջ և
անաչառ ընտանաւորութեան ենթրակելու:

Բագու. Բժ. Մ. Զ.

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԾԱՆՈՒԹՅՈՒՄ ՎԱՐՇԱՎԱՍԻ ԽԱՌ-
ՆԱԿՈՒԹՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Վարշավայի «Варшавский. Дневник» պաշտօ-
նական լրագրում, ապրիլի 9-ից տպված է կա-
ռավարական հետեւեալ ծանուցումը:

«Անցեալ երեքշաբթի, ապրիլի 5-ին, զա-
նազան կոչումի անձանց մի խումբ մտադրու-
թիւն ունէր հրապարակալին ցոյց անել ի յիշա-
տակ Վարշավայի ապստամբութեան հարկաւորաց
տարեկարծի, որին զլուր կանգնեց այն ժամա-
նակ տեղացի կոչակար Եան Կիրիսկի:

«Այդ օրը, առաւօտեան մօտ 10 ժամին, ու-
տիկանութեան պաշտօնականներ նկատեցին այս-
տեղի համալսարանի ուսանողների մեծ քանա-
կութիւն, որոնք գնում էին, իրանց ուղեկցող
տիկիւնների հետ, և մտնում ա. Եօաննա եկեղե-
ցին, ուր այդ ժամանակ կատարվում էր մի յա-
տուկ ժամատացութիւն՝ պատուէրով:

առում էր որը եմ, որը այրի, որը հիւանդ ունեմ,
որը մեղադրում էր տանտեղերին, որը գիւղի
նշանաւոր մարդկանց, որ դրանք չեն թողել, որ ի-
րանց ցորեն տան և բոլորն էլ զօրով պահանջում
էին: Ոչ խրատը, ոչ համոզելը, ոչ բարկութիւնը
չէին օգնում, բացի այն, որ ասում էինք՝ բաժա-
նողը մենք չենք, ձեզ չենք տալիս: Այդ խօսքից
յետոյ միայն դադարում էին: Բայց ինչպէս բո-
լորն էլ պնդում էին, նպատակ ստացողները բո-
լորն էլ ամենաշնորհակալներն էին: Ահա ինչ է նշա-
նակում գնալ և տեղի ու տեղը բաժանել:

Գուրա գալով բազմ. սկսեցինք բացատրել թէ
ո՞վ է ուղարկել այդ նպատակ, թէ որպիսի հեռա-
ւորութեան վրա գտնվող բարի մարդիկ իրանց
չեն մոռացել, յորդորում էինք առատ բերքի ժա-
մանակ օգնել կարօտեալներին և այլն: Այն խառնի-
նազանք բազմութիւնը, որ առաջ քիչ էր մնա-
ցել ամբողջ շտեմարանը թալաւներ, այժմ ամբող-
ջովին ուղարկութիւն դառած՝ ազատութեամբ
լուում էր մեր ասածները:

Մտնել արդէն ընկել էր, երբ մենք ճանապարհ
ընկանք և վերադարձանք Նոր-Բայազէտ:

Թէև ցանկութեանս հակառակ միմիայն երեք
օր մնացի կարօտ ժողովրդի մէջ, բայց լաւ տե-
տիւր ապաւորութեան հետ միասին մարդուն
պաշարում է մի թեթեւ, ուրախալի զգացմունք,
երբ յիշում էք, որ հեռաւոր հասարակութիւննե-
րը անտարբեր չեն մնում և օգնութեան ձեռք
են մեկնում կարօտեալներին:

Նոր-Բայազէտ. Ս. Տէր-Մարտիրոսեան

«Այդ ժամանակները վերջացնելուց յետոյ, այնտեղ ներկայ եղողները եկեղեցուց դուրս էին գալիս համարեա հատ-հատ և բոլորն էլ գնում էին դէպի մի կողմ, դէպի Ստարոս-Մէստո ա- նուանված շուկան, ուր սկսեցին խմբվել այն- պէս, որ երբ ծովեցիքն դէպի Ուզկի-Գոնայ փո- ղոցը, կազմվեց արդէն մօտ 300 հոգուց բաղկա- ցած մի խումբ, որը պիտի ստանար նմանութիւն ու- ներ, և գնում էր դէպի Պոլովանայ փողոցը, ուր ապրում է կալինսկու ուղղակի սերունդներից մէկը:

«Այստեղ, այս փողոցում, ոտտիկանական խում- բը բռնեց ցոյց անողներին և տարաւ Զամկովի ոտտիկանատան բակը, ուր ցուցակագրվեցին նը- րանք՝ իւրաքանչիւրի անձնագրութիւնը որոշելու համար: Բռնվածները թուով կան այստեղի համա- լսարանի 158 ուսանողներ, Վարչապալի անասնա- բուծական ինստիտուտի 3 ունկնդիրներ, 48 դա- նազան աղաւթաբերի և հասարակական զանազան դասակարգի և կոչումի 32 կանայք:

«Վարչական քննութիւնը մի քանի օրից մասին կատարվում է սահմանաւ կարգով:»

Դրան «Варш. Дневн.» հետեւել տեղեկու- թիւններն է աւելցնում, որ քաղել է արտասահ- մանեան լրագիրներից:

«Ուրբ Եռանայի մայր-եկեղեցում ժամատա- ցութիւնը բաղկացած էր հոգեհոգեւորական կարգից՝ «գնդապետ» Եւան Կալինսկու համար, որպէս «Վարչական առաւօտեան ժամերգութեան» զը- խաւոր կաղնակաւոր, և ապա «գոհացողական» մաղթանքից՝ այդ անգից տարեգործի առիթով, «հերկայութեամբ ժողովրդի զանազան դասերին պատկանող բազմաթիւ հասարակութեան»: Կա- լինսկու տան առջև ցոյց անելուց յետոյ, զը- րանք դիտարկութիւն ունեցին գնալ, բայց արդէն բոլորովին հակառակ ընտրութիւն ունեցող ցոյ- ցեր անելու համար, Մէլոփայա փողոցը, դէպի այն տունը, ուր հարկւր տարի առաջ բնակվում էր ռուս գեներալ Խէլստրոմ, որը ռուսաց մի փոքրիկ զորաբաժնի հրամանատարն էր Վարչա- վայում: Այդ տարեգործի նախընթաց օրը, ամսի 4-ին, երեկոյեան, քաղաքի զանազան տեղերում ցրված էր մեծ թուով «հրաւեր ժամատացութեան», իսկ նախընթաց օրերը ցրված էին տեղական լեհ հասարակութեան մէջ կարճ պրօկլամացիաներ, որոնցով ինչեցնում էին առաջկայ տարեգործի մասին:»

ՆԱՄԱԿ ԱՍԽԱՑՈՒՄԻՅ

Ապրիլի 13-ին

Կիրակի երեկոյեան, Եղիսարեթեան ուսումնա- րանի դասընթաց կայացրած երեքօրեանական 30 պատգամաւորների ժողովը՝ ս. Փրկիչ եկեղեցու համար նոր երեքօրեան ընտրելու, հին երեք- փոխ պ. Տիգրան Տէր-Միքայէլեանի փոխարէն, որի պաշտօնավարութեան ժամանակամիջոցը վա- ղուց է լրացել: Թերթիկներով թեկնածուներ ա- ռաջարկվեցին, որոնցից բուլղարիկ համաձայն- վեց միակայն պ. Բովանէտ Զաթարեանցը, որը և ձայների բազմութեամբ ընտրվեց երեք- փոխ Պ. Զաթարեանց յայտնեց ժողովին, որ ինքը երեքօրեանական պաշտօնը կը ստանձնի այն օրից, երբ նախկին երեքփոխի հայրենիքը քննված՝ իրան կը յանձնվեն: Պարոնի այս առա- ջարկութեան առիթով վիճաբանութիւն սկսվեց և հարցը պարզելուց յետոյ նա համաձայնվեց ըն- ղունել այդ պաշտօնը, պատշաճաւոր հաստատու- թիւնից յետոյ: Ապա ժողովը ձեռնարկեց նոր հաշուառնների ընտրութեան: Տոմարներով առա- ջարկվեցին հաշուառնների համար թեկնածու- ներ: Այստեղ նենգամիտ և ստորաբարձ անձինք, իրանց կրքերին կատարեալ յաղտորդ տալու համար՝ ծաղրածութեան դիմեցին: Զաթարեանի ընտ- րութեան հակառակորդները որոշեցին իրանց նպատակին այլ ձանապարհով հասնել: Թերթիկնե- րից մէկով հաշուառն է առաջարկվում նաև ու- սումնարանի ծառան:

Ժողովականների այդ տեղի արարքը նկատելով պ. Զաթարեանն ասեց. «Ինչպէս երևում է ժո- ղովականներս անձնուհաս ենք լուրջ գործ կա- տարելու և այժմանից իսկ ցոյց ենք տալիս, թէ ինչպէս ենք վերաբերվում հասարակական գոր- ծին: Այսպիսի հանգամանքում ես չեմ կարող ծառայել և կը հրաժարվեմ, եթէ չիմացվի, թէ ո՞վ է իրան այդպիսի վարմունք թող տուողը: Այդ պահանջներն նաև ժողովականներից մի քանիսը, բայց որովհետև նախապահող քահանան օրէնքին

հակառակ գտաւ այդ դադարը բանալը, այդ պատճառով էլ պ. Զաթարեանը հեռացաւ ժո- ղովից: Պարոնի հեռանալուց յետոյ ժողովական- ները մի փոքր այդ գործով զբաղվեցին և ապա նիստը փակելով հեռացան ժողովից: Ժողովում պատահած իրողութեան մասին յայտնում են քաղաքի յաջորդին, որը պատուիրում է գոր- ծակալ քահանային՝ պատգամաւորներին նորից ժողովի հրաւիրել և ընտրել հաշուառններ, քանի որ պ. Զաթարեանը համաձայն է ընդունել երեքփոխանական պաշտօնը, սահմանող որ նրա ընտրութեան ժամանակ ոչ մի ղեկավար չէ պա- տահել: Այսպիսի որոշում մեծ եղաւ զարմանքը, երբ հրաւիրութիւնն ստորագրում են, բայց չեն գնում ժողովի: Այս դեռ բաւական չէ. մի քանի «պղտոր ջրում ձուկ որսողներ» ընկնում են փո- ղոցի փողոց և համոզում պատգամաւորներին, որ ժողովի չը գնան, առարկելով թէ Զաթարե- անցը հրաժարվել է, նա երեքփոխանութեան յարմար անձնագրութիւն չէ, նորից ընտրութիւն պիտի անել և հաղար ու մի տեսակ դատարկա- բանութիւններ: Մինչև անգամ գտնվում են մար- դիկ, որոնք այստեղ այնտեղ խօսում են, թէ հարկ չը կայ, որ երեքփոխը անպատ- ճառ ինտելիգենտ, կը թվաւ և զարգա- ցած մարդ լինի, թէ ամեն ոք էլ կարող է երեքփոխ լինել: Թէ ինչու Զաթարեանցը ե- ղուիտները հակառակ են Զաթարեանցի ընտ- րութեան, այդ էլ բացատրվում է նրանով, որ Զաթարեանցը անկախ է, ոչ ոքից անկախու- թիւն չունի և մեր հասարակական գործերի վե- րաբերութեամբ իր որոշ հայեացքներն ունի: Թէ ինչու մի կարգ մարդիկ էլ կը թված, զարգացած և ինտելիգենտ մարդու ընտրութեանը դէմ են, աւելորդ է բացատրել. «գայլերին խաւար դիշերը ձեռնտու է»:

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Ապրիլի 18-ին, Գրիգոր Արծրունու գերեզմանի վրա, հոգեհոգեւորական կատարվեցին թէ «Մշա- կի» խմբագրութեան և թէ մասնաւոր անձանց կողմից:

Կ. Պօլսից մեզ գրում են, որ Աշդեան պատ- րիարքին ուղղած կաթողիկոսական կոնդակը թարգմանվել և ներկայացվել է սուլթանին, ընագրի հետ միասին:

Ուրախութեամբ հաղորդում ենք, որ «Արարա- տի» վերջին համարում մտցած է պաշտօնա- կան քառօրե, որի մէջ պէտք է հաղորդվին վե- հարանի և սինոդի կարգադրութիւնները և որո- չումները:

Ստացանք յօդուած Երևանի և Կարսի նահանգների սովետական 1) Թիֆլիսից, 22 ր., հանդանակված պ. Սողոմոնեանի տանը՝ մի խումբ անձանց մէջ. 2) Եւրոպայից, Եւրասիական կայսրանից, 4 ր., որից 1 րուրի նուրից է Մ. Երևանց. 3) Թիֆլիսից, 8. Եւր. 4 ր. 5) Կուրա- կայա կայսրանից, 4 րուրէ Սկրովբան Աճեմա- նից 200 ր. 6) Բազուրից, Գեորգ Սադաղեանից 15 ր. 7) Փոթիից, Արգար Օսանեան Չիբիսեանից միջոցով 33 ր., որը աւելացել է պանդուխտ մը- յանների մէջ մատակարար համար հանգանակած գումարից. 8) Բազուրից, Ներսէս և Ալեքսանդր Արե- լեանները 10 ր., հետեւել նամակով. «Թոյլ տուէ՛ք «Մշակի» միջոցով ներդրութիւն խնդրել մեր բոլոր բարեկամներին և ծանօթներից, որոնց զարկելով, փոխարէնը ուղարկում ենք 10 րուրի ի 1894 թուին: Առ 1-ն յունվարի 1894 թ. կար 29940 ր. 71 Կ., յունվարին մուտք եղել է 1828 ր. 20 Կ., և ծախսվել է 2156 ր. 67 Կ., փետր- վարին մուտք եղել է 2506 ր. 11 Կ., և ծախս- վել է 267 ր. 56 Կ., առ 1-ն մարտի մնում էր 31847 ր. 79 Կ., մարտին ծախսվել է 1026 ր. 68 Կ., առ 1-ն ապրիլի մնում է 33076 ր. 27 Կ.: Այս գումարը գտնվում է՝ 1) Պետական բան- կում ընթացիկ հաշուով 6307 ր. 55 Կ., 2) նոյն տեղ տոկոսաբեր թղթերով 25524 ր. 30 Կ., 3) նոյն տեղ խնայողական գանձարանում 1239 ր. 32 Կ., 4) առձեռն դրամով 5 ր. 10 կոպէկ:

Կ. Պօլսի «Մշակի» լրագրող հաղորդում է, թէ ռուս-պարսկական սահմանադրութեան վրա դանդաղ թափի գրելի 100-ի չափ բնակիչները խնդրելով դիմել են թիւրքաց կառավարութեան և թիւրքալուծի խնդրել թիւրքա անցնելու և օսմանեան հպատակ լինելու: Սուլթանը մի իրա- դէմով տուել է իր համաձայնութիւնը: Զարմանալի չէ արդեօք: Թիւրքաց կառավարութիւնը չէ կա- ռողանում հազար իր հպատակների մասին, սովի և հարստահարութեան պատճառով ընկ ժողո- վուրդը թիւրքայից զաղթում է օտար երկրներ,

և ահա նոյն թիւրքաց կառավարութիւնը մեծա- հոգութեամբ օտարերկրացիներին է տեղ տալիս և հովանաւորութիւն խոստանում:

Հայաստանի Բարեգործական ընկերութիւնը ու- ղարկել է մեզ 1893 թ. իր գործունէութեան տպագրած հաշիւը: Ընկերութիւնը այդ հաշիւա- րում ունեցել է 66 մշտական և 166 իսկական անդամ: Մուտք ունեցել է ընդամենը 1893 թ. 7893 ր. և 18 Կ., ծախս—7,049 ր. 27 Կ., առ 1-ն յունվարի 1894 թ. ունի 15,195 ր. 56 Կ.: Ծախսի մեծ մասը եղել է ընկերութեան հաշուով պահվող ս. Նշան եկեղեցու ծխական դպրոցի և կար ու ձիւ ուսումնարանի վրա: Գալով ընկերութեան գործունէութեան, որ արտայայտված է զիւրա- րապէս այդ երկու դպրոցների պահպանութեան մէջ, պէտք է ասենք, որ հաշիւը այդ գործունէութե- նը քննադատելու համար նիւթ չէ մատակարա- րում: Ի դէպ, յիշեցնում ենք, որ այսօր, ապրիլի 23-ին, ցերեկվայ 12 ժամին, ս. Նշանի դպրո- ցում նշանակված է ընկերութեան տարեկան ընդ- հանուր ժողովը:

Ապրիլի 21-ին բանկի թատրոնում կայացած սիրողների ներկայացումը դրաւել էր ահագին բազմութիւն. ոչ թէ միայն բոլոր տոմսակները վաճառված էին, այլ և շատերը ստիպված էին կանգնել: Խաղում էին Սուրբուհիանցի «Քանդա- օջախ» կոմիդիան: Խաղին մասնակցում էին իբրեւ սիրողներ՝ տ.տ. Մ. Խոսրովեան, Կ. Եւանգելեան, Ե. Թալիբեան, Վ. Ալիբեան, Ե. Առաքելեան, օր. օր. Վ. Փոքրեան և իշխանուհի Ս. Արդուբեան, պ.պ. Գ. Բաշինջաղեան, Ն. Տիգրանեան, Մ. Խա- լաթեան և Ա. Մանուկեան: Պիեսի մի հերոսի, այն է Օսէյի դերը կատարող սիրողը դուրս էր ե- կել ծածկանուծով: Ընդհանրապէս ասելով, խաղը, իբրեւ սիրողների խաղ, լաւ անցաւ, և հասարա- կութիւնը ծախսահարութիւններով վարձատրեց նը- րանց բոլորին: Ինչպէս յայտնի է այդ ներկայաց- ման արդիւնքը, որ, ինչպէս լսեցինք, կը լինի մօտ 1,400 րուրի, պէտք է յանձնի Բարեգործական ընկերութեան, յօգուտ սովեթների:

Յիշեցնում ենք, որ այսօր, Թիֆլիսի արքունա- կան թատրոնում պէտք է կայանայ Կարա-Մուր- զայի համերգը, որին մասնակցում են 80 հոգի: Յոյս ունենք, որ մեր հասարակութիւնը գնալով կօնցերտին, թէ էսթետիկական դուստրութիւն կը ստանայ և թէ կը խրախուսի սովետ և եռան- ղուն խմբագրի:

Մեզ ուղարկված է տպագրելու հետեւալը. «Ամսի 19-ին, Նաթիւղի հայոց ծխական դըպ- րոցում տեղի ունեցաւ առաջին անգամ մի հա- մեստ գրականական երեկոյթ, որտեղ հրաւիրված էր այդ քաղաքամասի հայ երիտեւ հասարակու- թիւնը: Երեկոյթին յաջորդեցին մոզական պատկեր- ներ, որոնք մեծ գուարճութիւն պատճառեցին թէ աշակերտներին և թէ հասարակութեան: Դպրոցի ուսուցիչ Գ. Միրմանեանց, ի միջի այլոց, պատ- մեց ժողովրդին Գրիգոր Լուսաւորչի և Էջմիած- նի մասին. նոյնպէս բացատրեց ուսման նշա- նակութիւնը և ծնողների պարտքը: Աշակերտնե- րին դրեւ և քաղցրեղէններ բաժանելուց յետոյ, յաջորդեցին առիական պարեր ջութակով և դա- հիրով: Երեկոյթը անցաւ աջող և լաւ տպաւո- րութեան գործեց ամենքի վրա:»

Կոյրերին խնամելու հոգաբարձութեան Կովկա- սի ճիւղի խորհուրդը ուղարկել է մեզ տպագրե- լու համար հետեւալ տեղեկութիւնները, որ վերա- բերում են գանձարանի դրութեան առ 1-ն ապրի- լի 1894 թուին: Առ 1-ն յունվարի 1894 թ. կար 29940 ր. 71 Կ., յունվարին մուտք եղել է 1828 ր. 20 Կ., և ծախսվել է 2156 ր. 67 Կ., փետր- վարին մուտք եղել է 2506 ր. 11 Կ., և ծախս- վել է 267 ր. 56 Կ., առ 1-ն մարտի մնում էր 31847 ր. 79 Կ., մարտին ծախսվել է 1026 ր. 68 Կ., առ 1-ն ապրիլի մնում է 33076 ր. 27 Կ.: Այս գումարը գտնվում է՝ 1) Պետական բան- կում ընթացիկ հաշուով 6307 ր. 55 Կ., 2) նոյն տեղ տոկոսաբեր թղթերով 25524 ր. 30 Կ., 3) նոյն տեղ խնայողական գանձարանում 1239 ր. 32 Կ., 4) առձեռն դրամով 5 ր. 10 կոպէկ:

ՄՈՍԿՎԱՅԻՆ մեզ գրում են. «Այստեղ ստաց- ված է կաթողիկոսի կոնդակը, որով վեհապառ- հարկում է օգնութեան ձեռք մեկնել սովեալ-

ներին: Ժողովուրդը լսելով կոնդակի մասին, խու- ուն բազմութեամբ, ամսի 10-ին, կիրակի օրը լցրել էր պատարազի ժամանակ եկեղեցին: Սա- կայն որքան էր բոլորի զարմանքը, երբ պատա- բազը վերջանալուց յետոյ, մեր քահանաները զը- խարկները ծածկեցին և եկեղեցուց դուրս եկան՝ չը կարգաւով կօնդակը և մի խօսք չասելով նրա մասին: Ասում են, որ չը կարգաւու պատ- ճառն եղել է այն, որ մեր քահանաներից միւրը անյարմար է դսել կարգաւ մի կօնդակ, որը... գրած է աշխարհաբար, քանի որ, աէր-հօր լօղի- կայով, կօնդակները պէտք է գրաբար լինեն գրված, որպէս զի, ի հարկէ, ոչ ոք չը հասկանայ, ինչպէս- և ինչն աէր-հայրը:»

ՓՈԹԻՅԻ մեզ գրում են. «Այսօր, ապրիլի 18-ին, հայոց գերեզմանատանը, մի քանի երիտասարդնե- րի խնդրելով հոգեհոգեւոր կատարվեց անմահ հրապարակախօս Գրիգոր Արծրունու յիշատակին: Հոգեհոգեւոր ժամանակ հաւաքվեցին տաճկա- հայաստանցի բոլոր հայ մշակները: Հոգեհոգեւո- րից յետոյ պ. Վ. Փափազեանցը մի քանի խօս- քով բացատրեց Արծրունու ու լինելը և թեց նրա գործունէութեան մի քանի կէտերը:»

ԵԿԱՏԵՐԻՆՈՎՈՒՄԻ մեզ գրում են. «Ապրիլի 10-ին, երկսեռ ուսումնարանների դահլիճում կա- յացաւ ծխականների ընդհանուր ժողով, երեքփոխ ընտրելու համար: Այս անգամ ժողովին ներկայ էր ծխականների ահագին բազմութիւնը: Զայնքի մեծամասնութեամբ երեքփոխ ընտրվեց Սարգիս Խարակիզեանցը և երեքփոխանական հաշուառն- ներ՝ Արամ Շապուխեան, Պետրոս Սալաճեան և Մովսէս Գաթիվիքեան:»

ՆՈՐ-ԲԱՅԱՅԵՏԻՆ մեզ գրում են. «Երևանի նա- հանգապետ միջնորդել է, որ այստեղ մտցնվի քաղաքային ինքնավարութիւն, միայն կըճատած ձևով: Եթէ ոչ ներկայ, դէթ եկող 1895 թ.ից այդ ինքնավարութիւնը կը սկսի գործադրվել:»

ՇՈՒՇՈՒՄ մեզ գրում են. «Ամսի 16-ին վախ- ճանված տիկին Թագուհի Մէլէ-Շահնազարեանի յիշատակին, նրա ամուսինը նուիրեց Գարաբաղի թեմական դպրոցին և Մարիամեան օրիորդաց ու- սումնարանին՝ իւրաքանչիւրին 200 ր. և ռուսաց օրիորդաց ուսումնարանին 100 ր.:»

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՄԱԿԵՐՈՆԻԱՅԻ ԲՈՒԿԱՐԱԿԱՆ ԴՊՈՑՆԵՐԸ

Մակեդոնայի բուլղարական դպրոցներում դա- սատուութեան ազատութեան մասին սկսված եր- կարատե փէճը վերջացաւ բուլղարների կատարեալ յաղթութեամբ: Սուլթանը, որպէս հեռագրում են Կ. Պօլսից «Բեյութի» գործակալութեանը, ապրիլի 14-ից (26-ին) մի իրադէ հրատարակեց, որով ըն- դունում է բուլղարական կառավարութեան բոլոր պահանջները:

Այդ առիթով Սօֆիայից հեռագրով հաղորդում են, որ ապրիլի 14-ին (26-ին) մի քանի հարիւր մակեդոնցիներ, երաժշտական երկու օրկեստրի ուղեկցութեամբ, ցոյցեր արեցին Ստամբուլովին՝ դպրոցական գործին աջող վախճան ապրու հա- մար Մակեդոնայում: Այդ մակեդոնցիների մեծա- մասնութիւնը առաջուց Սօֆիա էին կանչված նրա համար, որ եթէ դպրոցական հարցի առի- թով Բ. Գոնից անբաւարար պատասխան տուա- ցէր, դրանք պէտք է Մակեդոնա ուղևորվէին՝ այնտեղ խաղութիւններ յարուցանելու նպա- տակով: Այդ միջոցով Ստամբուլով ստիպեց Բ. Գրանը կամ անյապաղ գորքեր կենտրոնացնել Մակեդոնայում, որ շատ թանկ կը նստէր նրան, կամ ընդունել Բուլղարայի պահանջները: Բ. Գո- ուր ընդունեց էժան միջոցը, և դիմումներ արեց Ստամբուլովին:

ՊԱՐԱԿԱՍՏՆ

Մէլէդից, ապրիլի 2-ից, «Кавказ» լրագրի թղթակիցը գրում է հետեւալը. «Այս րօպէիս ժողովրդական ապստամբութիւն սկսվեց Մէլէ- դում: Պատճառը նոյնն է, ինչ որ անցեալ տարի —սացի և այլ պաշարեղէնների թանցութիւնը: «Խորասանի կառավարիչը թաղնիկը իր պալա- տում Զօրքերը ոչ միայն ոչինչ չեն անում, այլ մինչև անգամ նկատվում են սարքադներ (հետեւալ զինուորներ) ապստամբների մէջ:

Типографія Канцел. Главн.нач. Гражданск. частью на Кавказѣ, Лорисъ-Меликовская ул., д. 185.